70. ԿԱՐԻԲ ԽԱԼԻՎՈՐ

Կէղի խալիվոր մի, խալիվոր կէրթա կիշեր կքնի մեծ տուն մի, գոլվաթվոր, մեծ հարուստ տուն մի։ Իրիկուն էդ գեղ խարսնիս կելնի, դհոլ կզարկին։

Էդ գեղի խարսեր ուրանց սերսուփ խալվներ կխագնին, զրգսեր օսկիք հըմեն կկապին կէրթան։

Կէրթան խարսնիք կխաղան ու կիշեր գիգան։ Օր գիգան ուրանց շորեր հըմեն կխանին, կթալին վըր շրտին, զրգսեր կթալին դան։

Կարիբ խալիվորուն կըսին. «Խալվոր հեքաթ մե ասա, ժըզլինք մըզի»։

Էդա հարուստ տուն լէ թունիր պուտուկ մի խաշ կէղնի. բունիգ լէ քաթա կելնի, իդոնց լէ բոզ քուռակ մե կեղի թավլեն։

Խալիվոր կասա.— Խեքաթ խեքաթ պապս ա,
Թորվան միջին փորս ա,
Շրտի շորեր հաբանս ա,
Մառնի քաթեն խուրջիս ա,
Կապուտ քուռակ տակս ա։

Խարսներ հո՜ւյ կծիծղան կըսին. «Էդ ի՞նչ անուշ խեքաթ մի ըսիր իսա»։ Գելնին, կպառկին քնին։

Օր կպաոկին կքնին, խալիվոր կհանա խաշն ուտա, շրտի շորեր, քաթեք գըլնա հաբան, կէրթա կապուտ քուռակ լէ թավլից կհանա, գելի կխեծի, յալլա՜հ կէրթա։

Խարսեր լուսուն գելնին, կահանին օր բան մե չկա, նա շոր կա, նա քաթա, նա խաշ կա, նա ձին թավլեն կա։

Կնստին լան, կըսին. «Վա՜յ, պապեն կնա, իրիկուն ծաղրիկ ա, լուսուն լալիկ ա էլման ա, խալվոր զուր խեքաթ պատմեց ու մենք չխայմանք»։